

ԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆ ԲՆՈՒՑԹԸ

Օսմանիզմ-Պանօսմանիզմ. «Իսլամի գրկում ազգություններ չկան» - հռչակում է մահմեդական կրոնը:

Հարցին, թե տվյալ անձը ով է, անգամ 20-րդ դարասկզբի թուրքը սովորաբար պատասխանում էր՝ մահմեդական, քանի որ «կրոնը նրա համար արժեքներից ամենաբարձրն էր և կրոնն էր կարգավորում մարդու վարվեցողությունը»: Մահմեդական և թուրք հասկացությունները նրա համար հոմանիշ էին: Հոմանիշ էին նաև մահմեդականությունն ու թրքությունը, թուրքականությունը, թուրքերենը: Թուրքիայում աշխարհիկ կրթությունը ծնունդ առավ միայն 19-րդ դարի կեսերին, այսինքն, դարեր շարունակ կրթությունը եղել է մահմեդական հոգևորականության մենաշնորհը: Նաև դրանով է բացատրվում թուրքերի արհամարհանքն ու ատելությունը ոչ մահմեդականների հանդեպ: Չնայած կայսրության տարածքները մեկը մյուսի հետևից անցնում էին գյավուրներին, թուրքը չէր վհատվում, քանի որ աշխարհում նա մեծաթիվ եղբայրներ՝ մահմեդականներ ուներ: Երկիր մոլորակի մահմեդականների հետ միավորվելու թուրքերի ձգտումը ենթագիտակցության մեջ այնքան ուժեղ էր, որ նույնիսկ երիտթուրքերը, որոնք կրոնի հետ առանձնապես հաշտ չէին, առաջ քաշեցին աշխարհի մահմեդական երկրների դաշինք ձևավորելու հարցը. «Թուրքը չի կարող ապրել առանց արաբի, թուրքը արաբի աջ աչքն է, աջ ձեռքը», - ասում է պանիսլամիստ Մահմեդ Ակիֆը:

«Թուրք» բառը օսմանցու համար շատ ավելի սոցիալական, քան ազգային իմաստ ուներ, իսկ հայրենասիրությունը ավելին չէր, քան կապվածությունը ծննդավայրին: Դարեր շարունակ «թուրք» բառը օգտագործվել է որպես պիտակ «կարճատես թուրք», «այլանդակ մոռոթով թուրք», «թուրք խարդախ», «շան մոռոթով թուրք» և այլն: Թուրք էին անվանում ցածր խավերի ներկայացուցիչներին, մասնավորապես՝ գյուղացիներին: Այստեղ դեր են խաղացել նաև հետևյալ գործոնները. Օսմանյան պաշտոնեության վերնախավը հիմնականում ձևավորված էր ոչ թուրքերից: Թեմուրի հետ կոչվում պարսությունը հետևանք էր այն բանի, որ թուրք ավագանին դավաճանեց «օսմաններին»: Հակաթուրք բնույթ ուներ արաբաիսլամական ոչ միայն քաղաքականությունը, այլև գիտությունը: Ղուրանում թուրքերն անվանվում են «մարդկության թշնամիներ ու գազաններ», «ոասա, որ մարդկությանը թշվառություն բերեց»: Հակաթուրքական մտքերով է ողողված վաղ շրջանի իսլամական ամբողջ գրականությունը: Այլ կերպ ասած, դեռ վաղ շրջանից թուրքերը վատ համարում ունեին, ինչը նրանց մեջ առաջացրեց հակազդեցություն և սեփական առավելություններն ապացուցելու ձգտում: Դրա արտահայտությունն է նաև թուրքի ինքնագովությունը՝ թուրքը վեր է բոլոր ազգերից ու ցեղերից և կոչված է կառավարելու նրանց:

19-րդ դարի կեսերին այդ զգացմունքները ոչ միայն բուռն աճ ունեցան, այլև նենգափոխվեցին ռասիստական գաղափարներով: Ասեփական ժողովրդի, նրա լեզվի ու պատմության հանդեպ դարավոր անտարբերությունը, ցեղային թմբերի տակից

գլուխ դուրս հանող թուրքական ազգայնամոլությունը հայացքն ուղղեց ոչ թե սեփական, այլ ուրիշ տերություններին, նվաճողներին, այս անգամ, ուշադրության կենտրոնում դնելով թուրքերի շահերը:

Թաներ Ակչամը իր «Թուրքական ազգային «ես» և Հայկական Հարցը» գրքում բերում է մի երկխոսություն, որը տեղի էր ունեցել Փարիզում 19-րդ դարավերջին:

- Դուք ո՞ր ազգին եք պատկանում:
- Մենք մահմեդականներ ենք:
- Բայց չե՞ որ դա կրոնական պատկանելիություն է:
- Այդ դեպքում մենք օսմանցիներ ենք:
- Բայց դա ազգություն չէ:

Երիտթուրքերն իրենց թուրք չէին անվանում: Հունգարացի արևելագետ Վամբերին 1898 թ. գրել է, որ ինքը Ստամբուլում չհանդիպեց մի թուրքի, որը լրբորեն հետաքրքրվեր թուրքերով ու թուրքերենով: Նույնիսկ թուրքիզմի հիմնադիր Զիա Գեռքավիր թուրքերի պատմությամբ սկսեց հետաքրքրվել միայն այն բանից հետո, երբ 1896-ին ընթերցեց Լեոն Կաթի գիրքը թուրքերի մասին: Անգամ 20-րդ դարասկզբին օսմանյան դպրոցներում թուրքերի պատմություն չէր դասավանդվում, դրանց 2/3-ում անցնում էին Ֆրանսիայի, իսկ 1/3-ում եվրոպական մյուս ժողովուրդների պատմությունները: Մինչև 1908 թ. թուրքերենը մեղրեսներ մուտք չունեց:

Հետ մնալը շուտափույթ հաղթահարելու ձգտումը նույնպես թուրքերի մեջ ծնեց աստելություն մյուս էթնիկական խմբերի նկատմամբ: Իսկ հետ մնալու գլխավոր պատճառն իսլամն էր: Օսմանցիների շրջանում, ի տարբերություն մահմեդական մյուս ժողովուրդների, մուսուլմանական գիտակցությունը զարգանում էր ի հաշիվ թուրքականության: Դրա հետևանքով թուրքական ոչ մի պետությունում թուրքերենը չդարձավ պետական լեզու: Եվ ինչպես նկատել է Վամբերին. «ազգայնականացման միտումներում իսլամը ոչ մի տեղ չհասավ այնպիսի խոշոր հաջողության, ինչպես օսմանյան թուրքերի շրջանում»: Հավանաբար այս իրողության գլխավոր պատճառը ոչ թե իսլամն էր, այլ թուրքականի համեմատությամբ պարսկաարաբական քաղաքակրթությունների բարձր մակարդակը:

Թուրքերի համար ինքնաճանաչման ու ինքնաներկայացման միջոց մնաց Օսմանի ժառանգ լինելը, այլ ոչ թե ինքնուրույն ազգություն ու հայրենիք ունեցող թուրք անվանումը: «Հայրենիքը,-ասել է Աբգուլ Համիդը,-տեղ է, որտեղ մարդ ոտ է դնում: Ինձ հասկանալի չէ, թե ինչպես կարելի է հանուն դրա մեռնել»: Թուրքերն այս միտքը հաճախ են շեշտում և այն բացատրում իրենց ռասայի «ի ծնե» ինտերնացիոնալիզմով: Իրականում նման երևույթ եղել է բոլոր ժողովուրդների մոտ զարգացման որոշակի շրջանում, և քանի որ թուրքերի զարգացումը հետ էր ընկել, ապա նրանց «այդ ինտերնացիոնալիզմը» ձգվեց մինչև 20-րդ դարը: Օրինակ, ռուս գյուղացին մինչև 10-րդ դարի կեսերն իրեն անվանում էր ոչ թե ռուս, այլ մուժիկ: Հայրենասիրական գեներն այստեղ ոչ մի դեր չունեին: Պարզապես բացակայում էր ձևավորված ազգային գիտակցությունը: Իսկ ազգային (համազգային) գիտակցության ծնունդը կապված է ազգի ձևավորման հետ: «Թուրք ազգի ձևավորումը,-գրում է Թ.

Ակչամբ,-մի առանձնաստկություն ուներ՝ այն տեղի ունեցավ, երբ դեռ գոյություն ուներ վերազգային Օսմանյան կայսրությունը և թուրք գործիչները մտահոգ էին, որ «նացիոնալիզմի գաղափարների տարածումը կարող է հանգեցնել կայսրության անկման»:

Այդ գործիչները չէին հանդուրժում հպատակ ժողովուրդների ազգայնականությունը, նրանք ինքնաբերաբար ազգային-ազատագրական շարժում ասածն արտուրդ էին համարում՝ ինչ-որ ուժերի (ներսի, թե դրսի) խարդավանքների հետևանք: Իսկ քանի որ գլխավոր նպատակը բազմազգ պետության կառույցի պահպանումն էր, պաշտոնապես պետական հոչակվեց «այն գաղափարախոսությունը, որը հնարավորություն էր տալիս միավորելու կայսրության բոլոր ժողովուրդներին մի ընդհանրության մեջ: Թերևս դրանով է բացատրվում, որ երիտթուրքերը խուսափում էին իրենց քաղաքականության բնույթը ազգային համարելուց, որովհետև այն այլազգիներին դուրս կդնէր թուրքական կայսրական հավակնությունների շրջանակից, և մինչև 1913 թ. իրենց թուրքիստական էությունը թաքցնում էին պանիսլամական և պանօսմանական դոկտրինաների ետևում: Բալկանյան պատերազմից հետո միայն իթիհադականների թուրքիստական էությունն «ազատվեց պարտադրված թմբիրից և ոչ միայն նրանք, այլև Օսմանի բոլոր ժառանգորդները սկսեցին բարձրագույն ազատակել իրենց թուրք լինելու մասին: Սակայն դա լոկ ինքնաճանաչում ու ինքնահոչակում չէր, այլև սկիզբը «թուրքացման թուրքական քաղաքականության»:

«Երբ թուրքերն ունեին մնացած աշխարհի համեմատությամբ առավելության զգացում (մինչև 19-րդ դարի կեսերը), - շարունակում է Թ. Ակչամբ,-չգիտեին, որ իրենք թուրք են: Այդ գիտակցությանը հանգեցին միայն այն ժամանակ, երբ ոչ լիարժեքության հոգեբանությունը լրիվ տիրապետեց նրանց: Փաստորեն պանթուրքիզմը թուրքերի համար հանդիսացավ անելանելիության, անհուսության և ոչ լիարժեքության հոգեբանությունից անխուսափելի փախուստի արտահայտություն»:

Կրոնական գործոնը ցեղասպաններն օգտագործեցին մահմեդական բնակչությանը մեղսակից դարձնելու հանցագործությանը: Ի դեպ, երիտթուրքերը չունեին կառավարման փիլիսոփայություն, ինչպես Ահմեդ Ֆերոզն է ասում, նրանք «առանձնապես չէին հետաքրքրվում քաղաքական գաղափարներով»: Դրա համար էլ երիտթուրքերի կուսակցության շարքերում կային թե՛ պանթուրքիստներ ու պանօսմանիստներ և թե՛ պարզապես թուրք ազգայնականներ: Թուրքական քաղաքական մտածողությունը մերկապարանց օգտակարության մտածողության հակումն է որդեգրած փիլիսոփայությանը: Ինչպես նշում է Պ. Աքչուրան պանթուրքիզմի հոչակագրի համարում ունեցող «Երեք քաղաքական գործիչներ» գրքում, դա բացատրվում է «պետության համար օգտակարության ձգտմամբ»: Թալեաթը Գեոքավիին ծաղրում էր նաև այն բանի համար, որ նա մեծ տեղ էր տալիս գաղափարախոսությանը:

Թուրք պատմաբան Ահմեդ Ռասիմը գրում է, որ արդեն 1860-ական թվականներից «օսմանյան ազգություն» արտահայտության տակ հասկացվում էին թուրքերը: Հենց նույն ժամանակ էլ Ալի Սուլվին հռչակեց. «Թուրքերը պետք է լինեն կառավարող ազգ, քանի որ թե՛ ռազմական և թե՛ մշակութային ու քաղաքական առումով նրանք գերազանցում են բոլոր ժողովուրդներին և հանդիսանում են հնագույն ռասա»:

Ամբողջ 19-րդ դարում Օսմանյան կայսրության գլխին կախված էր կործանման, անհետացման վտանգը՝ Արևելյան հարցը: Նաև ակնհայտ դարձավ, որ կայսրության հետագա գոյության խնդիրը լուծում էին ոչ թե իրենք՝ թուրքերը, այլ եվրոպական պետությունները, որ կայսրությունը շարունակում էր ապրել եվրոպական տերությունների, և առաջին հերթին, Ռուսաստանի ու Անգլիայի միջև եղած հակասությունների շնորհիվ: Իսկ քանի որ տերությունների միջամտությունը կայսրության գործերին հիմնականում արտահայտվում էր հպատակ ժողովուրդներին, մասնավորապես քրիստոնյաներին հովանավորելու տեսքով, ու նաև այն, որ այդ ժողովուրդները Եվրոպայի օգնությամբ մեկը մյուսի հետևից թոթափում էին օսմանյան լուծը, թուրքերի մեջ ձևավորվեց այն մտայնությունը, թե կայսրության դժբախտությունների պատճառը քրիստոնյա հպատակներն էին:

Դրան գումարվեց թանգիմաթի հռչակած սկզբունքը մահմեդականն ու քրիստոնյան իրավահավասար են, ինչը չնայած իրավահավասարություն չստեղծեց, սակայն «խորապես վիրավորեց մահմեդականների կրոնական զգացմունքները»:

Նոր ժամանակաշրջանում թուրքի արտոնությունները շուտ եկան նրա դեմ: Եթե դարեր շարունակ թուրքերը զբաղված են եղել միայն բանակում և պետական ծառայությունում, արհամարհել են աշխատանքը, տնտեսական գործունեությունը, ապա նոր ժամանակներում տնտեսական կյանքը դուրս եկավ առաջին պլան և սկսեց որոշիչ դեր խաղալ: Բայց, քանի որ տնտեսական գործունեության կրողները հիմնականում հայերը, հույներն ու հրեաներն էին, որոնց ձեռքում կուտակվել էին վիթխարի միջոցներ, իսկ թուրքերը դրանցից գուրկ էին, օսմանցին դա վերագրեց ոչ միայն նշված ժողովուրդների «արտոնյալ վիճակին», այլև խարդախությանն ու աճաբարարությանը: Դրա հետևանքով «կաթ վաճառող բուլղարացու», «հովիվ սերբի» և «կրպակատեր հայի» հանդեպ հպարտության ու «արժանապատիվ կեցվածքի» վերականգնումը թուրքի համար վերածվեց նպատակի:

Ահա այս հակաքրիստոնեական տրամադրությունները սնեցին օսմանիզմի հիմնա-դիրներին, ովքեր օգտագործեցին դրանք ռասիստական կրքեր բորբոքելու և քրիստոնյա հպատակների հանդեպ թշնամություն հրահրելու համար: Վերջինների նկատմամբ թուրքերի մեջ կար նաև վրեժխնդրության զգացում: Երբեմնի աշխարհակալ տերությունը, որից Եվրոպան դողում էր, վերածվել էր կիսագաղութի, դարձել խաղալիք նույն այդ Եվրոպայի ձեռքում: Սակայն քրիստոնյա Եվրոպայից թուրքը վրեժ լուծելու գորություն չունեի, ուստի վրեժխնդիր էր լինում իր քրիստոնյա հպատակներից: Այս վիրավորվածությունը, արհամարհանքն ու նվաստացումը նաև

նպաստեցին, որ թուրքերը հետ նայեին, երազեին նախկին հզորության վերստեղծման մասին:

«Ռազմական պարտությունները,-գրում է թուրքագետ Լևիսը,-ու քաղաքական անհաջողությունները սասանեցին թուրքերի ինքնավստահությունը, թե իրենք անհաղթ են և անվիճելի առավելություններ ունեն: Սակայն նախկին արհամարհանքը «վայրենի գյավուրի» հանդեպ ծնեց ոչ թե նախանձ, այլ ատելություն:

Թուրքերի հոգեբանական դեգերումների հիմքում, սակայն, ընկած էին նրանց սոցիալությունը, մոլեռանդությունը, բարբարոսական հակումները և հետամնացության ծնած ինքնասիրահարվածությունն ու թուրքականի բացարձականացումը: Դրա հետ մեկտեղ 70-ական թվականներին օսմանյան հասարակությունում նկատելի էր ազատական մտածողության աճ: «Պալատի ցոփությունը, ֆինանսների խրոնիկական չգոյությունը, ֆավորիտների ոչնչով չսահմանափակվող կամայականությունները դժգոհություններ առաջացրին նույնիսկ պաշտոնատարների և ոգևորականության շրջանում: Գրականությունն ու արվեստը համակվեցին արևմտյան ազատամտությամբ և գեղարվեստական կերպարների միջոցով մերկացնում էին գոյություն ունեցող կարգերի արատները»:

Որոշակի խավերում տիրապետող մտայնություն դարձավ այն, որ չնայած Օսմանյան կայսրությունը թուրքական պետություն էր, իրականում գյավուրների ձեռքում էր: Դա թուրքերին թվում էր (տարօրինակ անհավասարություն», և նրանք ավելի ու ավելի էին հակվում վերացնելու այդ «անհավասարությունը»: Այս ուղղությամբ առանձնակի եռանդ էին հանդես բերում բուրժուական տարրերը: Նրանք անհանդուրժելի էին համարում ոչ միայն այն, որ իրենք օսմանյան շուկայում ըստ պահանջի տեղեր չունեին, այլև, այն, որ հպատակ ժողովուրդների բուրժուազիան իրենց չէր ենթարկվում և դրանում մեղավոր հռչակեցին սուլթանական վարչակարգը, որն ավանդաբար թուլություն էր դրսևորում հպատակ ժողովուրդների նկատմամբ, հանդուրժողական քաղաքականություն վարում և անտարբերություն հանդես բերում թուրքերի ազգային շահերի հանդեպ: Հետևաբար, պետք էր սկսել վարչակարգի ամրապնդումից, դրան իր նախկին փառքն ու հզորությունը վերադարձնելուց: Այդ բուրժուազիային օղի պես անհրաժեշտ էր սուլթանական ուժեղ իշխանությունը նաև որպես պաշտպանական վահան Եվրոպայի տնտեսական ու քաղաքական ներխուժման դեմ: Հետևաբար, նա չէր կարող անհոգ նայել, թե ահագնացող ճգնաժամն ինչպես է դեպի անկում մղում կայսրությանը: Դրա առաջն առնելու գլխավոր պայման համարվեց իշխանության հիմնական լծակների հանձնումը նորաթուխ ունևոր խավերին: Այդ նպատակով առաջ քաշվեց ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական բարենորոգումների պահանջ: Եվ, ինչպես նման դեպքերում սովորաբար լինում է, բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական շահերը ներկայացվեցին գաղափարախոսական-տեսական սկզբունքների տեսքով: Թուրքական գազափարաբանության առնչությամբ Հր. Տասնապետյանը գրում է. «Ինչ անունով որ մենք կոչենք Թուրքիո քաղաքականությունը, պիտի չկարողանանք ուրանալ, որ ցեղային ու կրոնական ենթակայական տվյալներով այն մի կողմից

ձգտում է դեպի Արևմուտք, մյուս կողմից՝ դեպի Արևելք, որովհետև իր ցեղակիցների և կրոնակիցների տնտեսական շուկան նրա համար սքանչելի տեղ է հարստացման և ուռճացման: Այդ ձգտումն ինքնաբերաբար արտահայտվում է քաղաքական իմաստով, և դրա հետևանքով... Թուրքիան երբեք չընդունեց Հայ դատի իրավացիությունը, ինքզինքը ներկայացրեց որպես քաղաքակիրթ, հզոր, Եվրոպային արժանի հավաքականություն»:

Սակայն թուրքական բուրժուազիան թույլ էր: Չունենալով հստակ դիրքորոշում նա գուրկ էր ինքնուրույն քաղաքական ուժ դառնալու կարողությունից և ապավինեց թուրքական ավատատիրական շրջաններից սերած ուժերին, ովքեր նույնպես վերափոխումների էին ձգտում: Ըստ այդմ էլ, թուրքական բուրժուազիայի զազափարաբանության ձևավորողներ դարձան ավատատիրության ներկայացուցիչները:

Օսմանիզմը թուրքական քաղաքական դոկտրինա էր, որը խնդիր ուներ կայսրության ժողովուրդներին քաղաքական-նպատակային հիմքի վրա միավորելու միջոցով ապահովել օսմանյան տերության ամբողջականությունը: Այդ դոկտրինան քարոզչությունից բացի հանդիսանում էր քաղաքական միջոցառումների համակարգ, որն օսմանյան քաղաքացիների իրավահավասարության քողի տակ ձգտում էր թուրքացնել հպատակ ժողովուրդներին:

Օսմանիզմը ծնվեց 19-րդ դարի առաջին կեսին և մինչև կայսրության անկումը նշանակալից ազդեցություն գործեց նրա քաղաքականության վրա: Որոշ ժամանակահատվածում այն եղել է նաև պաշտոնական գաղափարախոսություն, օսմանիզմի շատ դրույթներ վերածվել են օրենսդրական ակտերի և պետական այլ փաստաթղթերի: Օսմանիզմի հենքի վրա Թուրքիայում ձևավորվեցին «ազգ», «հայրենիք» և նման մի քանի այլ հասկացություններ, որոնք թուրքական ազգայնամոլության ու մեծապետականության համար դարձան շարժիչ ուժ: Օսմանիզմը պարունակում է թուրքիզմի և իսլամիզմի մեծ չափաբաժին, մերժում հպատակ ժողովուրդների սուվերեն գոյության իրավունքը:

Օսմանյան կայսրության կազմում կար 60 ժողովուրդ և էթնիկական խումբ, որոնք խայտաբղետ էին ոչ միայն կրոնական, ռասայական, այլև զարգացման մակարդակի առումով: Դա իհարկե, սուլթանական վարչակազմի առջև միշտ էլ բարդ, ամենից առաջ՝ Թուրքիայի ամբողջականության պահպանության խնդիրներ է դրել, ինչն առանձնահատուկ նշանակություն ստացավ կայսրության անկման ժամանակաշրջանում:

Օսմանիզմը ձևավորվեց ազգային-ազատագրական շարժումների ծավալման շրջանում. ակնհայտ էր դառնում, որ այլևս հին ձևով կառավարելով՝ կայսրությունը փրկելն անհնար էր: Թուրքական իշխող խավերն սկսեցին միջոցներ փնտրել անկումը կասեցնելու համար: Մասնավորապես, հունական ապսամբությունը սուլթանական կառավարությանը հարկադրեց մտահոգվել, որ կարող էին ոտքի կանգնել նաև մյուս ռայաները: Ելքը մեկն էր «բարելավել նրանց վիճակը»: Եվ քանի որ հիմնականում ընդվզում էին բալկանահպատակները, իրադեներ հրապարակվեցին նրանց վիճակն

ինչ-որ չափով բարվոքելու համար: 1828թ. Բելիջի-գաղե Իզգեր Մուլոյը Մուհամմեդ 2-րդին գրեց. «Արդյո՞ք մեզ շահեկան չէ պահպանել ունեցածի թեկուզ մի մասը», քան կորցնել բոլորը: Մեկ տարի անց սուլթանը հույներին հավաստիացրեց. «Այլևս մահմեդականների ու ռայայի միջև ոչ մի տարբերություն չի դրվելու և ապահովվելու է բոլորի ունեցվածքի, կյանքի և պատվի անվտանգությունը»: Քրիստոնյաներին թույլատրվեց հագուստ կարել նույն կտորից, ինչ մահմեդականներն էին հագնում:

Օսմանիզմի հիմնադիրները միաժամանակ դարձան Թանզիմաթի գաղափարախոսներն ու նախաձեռնողները: Նրանցից Մուստաֆա Ռեշիդը Թանզիմաթի առաջին շրջանում (30-50-ական թվականներ) խնդիր դրեց ապահովելու բոլոր օսմանցիների կյանքի, ունեցվածքի և պատվի անձեռնմխելիությունը: Եվ այդ սկզբունքը տեղ գտավ Գյուլխանեի Հաթթ-ի շերիֆում: Սակայն նույն Ռեշիդը խոստովանել է, որ ինքը ձգտում էր ոչ թե քրիստոնյաների և մաձմեդականների իրավահավասարության, այլ նրանց իրավունքների միջև եղած տարբերությունների մեղմացման: Դրա համար էլ, երբ Հաթթ-ի Հումայունը հռչակեց օրենքի առաջ մահմեդականի ու ոչ մահմեդականի հավասարություն, Ռեշիդն այդ իրադեի հեղինակներ Ալիին և Հուադին մեղադրեց «իսլամին դավաճանելու մեջ»: Նա շահարկում էր ընդհանուր հայրենիքի գաղափարը արտաքին ուժերի դեմ ներքին համախմբման նպատակով: Ղրիմի պատերազմի նախօրյակին հրապարակված կոչում ասված էր. «Բոլորը պետք է ձգտեն ապրել լիակատար համերաշխ և ծառայել ընդհանուր հայրենիքին»:

Ռեշիդի հռչակած հավասարության կիսատպոստությունն արահայտվում էր նաև. վարչական բարեփոխումների ծրագրում: Նա առաջարկում էր վալիներին կից գործող մեջլիսներում տեղ տալ նաև քրիստոնյաներին, սակայն դրանցում մեծամասնություն անպայման պետք է լինեին մահմեդականները: Իսկ երբ բուլղարացիները 1850թ. ապստամբեցին պահանջելով կյանքի կոչել Թանզիմաթը, Ռեշիդը տեղական իշխանություններին հանձնարարեց գործադրել բիրտ ուժ:

Սակայն քանի դեռ Ռեշիդը մեծ վեզիր էր, Թանզիմաթը, չնայած նվազագույն չափով, այնուամենայնիվ կիրառվում էր, իսկ նրա հրաժարականից հետո, փաստորեն, բա-րենորոգումներն ի չիք դարձան: Ղրիմի պատերազմի նախօրյակին Կ. Մարքսի խոսքերով. «Սուլթանը հարկադրված էր հին մոլեռանդությունը ոգեկոչել, Ասիայի կատաղի բիրտ ցեղերին արթնացնել և նորից տանել Եվրոպայի վրա»:

Դրա հետ միասին Թանզիմաթը կայսրության դռները բացեց եվրոպական կապիտալի առջև: Այդ գործում ևս օսմանիզմի պարագլուխների, մասնավորապես Ալիի Ֆուադի, դերը մեծ էր, նրանք ձգտում էին մերձենալ Եվրոպային: Սակայն նրանց բացած դռներից Թուրքիա ներխուժեց ոչ միայն կապիտալը, այլև գաղութատիրական քաղաքականությունը, որն օսմանյան հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումներին աջակցելու, պատրվակով՝ սկսեց միջամտել կայսրության ներքին գործերին: Այդ վտանգը չեզոքացնելու, նպատակով՝ Ալին առաջ քաշեց թուրքահպատակ քրիստոնյաներին զիջումներ կատարելու անհրաժեշտությունը: Սակայն թե՛ Ալին և թե՛ Ֆուադը կայսրության փրկությունը

տեսնում էին հպատակ ժողովուրդների ձուլման մեջ: 1867թ. Ֆուադը հռչակեց. «Կայսրության փրկության միջոցը մահմեդականների և քրիստոնյաների ձուլումն է, այլ ոչ թե նրանց զուգահեռ, գոյակցությունը»: Ալին գրեց. «Բոլոր հպատակների ձուլումը... հանդիսանում է միակ միջոցը, որն ի վիճակի է մեզ փրկել սպառնացող վտանգից»:

Ինչ վերաբերում է կրոնական խնդրին, ապա Ֆուադի կարծիքով կայսրության քրիստոնյա ժողովուրդներն ունեն «երկու կրոն, մեկը բարոյական, մյուսը քաղաքական... բարոյական կրոնը կառավարությունը կարող է արհամարհել, նկատի չունենալ: Իսկ քաղաքական կրոնին պետք է մեծ զգուշությամբ վերաբերեին, քանի որ այն հաճախ է ծնում մեր գոյության հետ անհամատեղելի տեսություններ»:

Լեզվի հարցում Ալին գտնում էր. «Յուրաքանչյուր ոք, ով ուզում է ծառայության մտնել, պետք է կարողանա թուրքերեն գրել և կարդալ»: Որևէ վերակառուցում, ըստ Ֆուադի, չպետք է վերաբերեր կայսրության գոյության չորս հիմքերին «մահմեդական միլիտեթ, թուրքական պետություն, օսմանյան սուլթան և Ստամբուլը որպես մայրաքաղաք»: Պետությունն անպայման պետք է թուրքական լիներ, որովհետև Ալիի կարծիքով, կայսրությունում միայն մի ժողովուրդ կար, որը կարող էր մյուսներին կառավարել և համայնքների համար... ծառայել կապող օղակ»:

Կայսրությունը շատ ավելի ամուր կլիներ, եթե թուրքացվեր և ուժեղացվեր իսլամը: Փաստորեն ոչ միայն մերժվում էին մյուս կրոնները դրանք լինեին բարոյական, թե քաղաքական, այլև խնդիր էր գրվում վերակառուցել մահմեդականությունը, այն ուղղակիորեն ծառայեցնել օսմանյան պետության շահերին: Տեսական վերլուծումներն անմիջապես վերածվում էին գործնական քաղաքականության: «Մենք չենք կարող թույլ տալ,-գրում է Ֆուադը,-որ քրիստոնյաները լայնորեն ներգրավվեն Բ. Դռանը ծառայելու մեջ, քանի որ նման պարագայում քրիստոնյա տարրը չի հապաղի թուրքերին մղելու երկրորդական պաշտոնների»:

Օսմանները ձուլման նախնական և գլխավոր միջոցը համարում էին դպրոցը և առաջարկում էին ստեղծել երեխաներին օսմանականության ոգով դաստիարակելուն միտված խառը դպրոցներ: «...Մեր բոլոր հպատակ քրիստոնյաների դաստիարակությունը,-գայրանում է Ալին,-իրականացվում է Օսմանյան կայսրության նկատմամբ թշնամության հիմքի վրա»: Ուժացման եղանակ էր համարվում նաև քրիստոնյաներին բանակ զորակոչելը, ինչը կապահովեր «բարոյական որոշակի ձուլում» և «կատեղծեր ընդհանուր ոգի»:

Օսմանները գտնում էին, որ ժամանակի ընթացքում միլիտեթները մեծ իրավասությունների էին տիրացել և պահանջում էին դրանք վերածել լոկ կրոնական համայնքների, առանց աշխարհիկ լիազորություններին: Նրանք կատաղի պայքար էին մղում հպատակ ժողովուրդներին որևէ ինքնավարություն տալու դեմ:

Ն. Իգնատևը գրում է, որ Հայ ազգային սահմանադրությունը Բ. Դռան հովանավորությանը չարժանացավ: Սահմանադրության նախագիծը կազմող հանձնաժողովի անդամները «եղան Ֆուադի մոտ և խոսափողական պատասխան

սասցան»: Նա նկատում է, որ Ալին, «չնայած իր եվրոպական արտաքին ձևերին, հոգու խորքում իսկական թուրք էր և դեմ էր Եվրոպային»:

Գայսրության եվրոպական մասում ազգային շարժումները գնալով լայն թափ էին ստանում: Տեղի քրիստոնյաները, գրում է Պլովգիվում Ռոասատանի հյուպատոս Ն. Գերովը, «հանգել են այն մտքին, որ իրենք փրկություն չունեն, եթե թուրքական տիրապետությունը չոչնչացվի»: Օսմանիզմի առաջնորդները դրան հակադրեցին քաղաքական ռեակցիան քայլեր կատարվեցին քայքայելու միլիթների համակարգը, պատրիարքներին ջրկելու աշխարհիկ իրավասություններից, վերակառուցելու կրթության համակարգը, ուժեղացնելու վերահսկողությունը քրիստոնյա հպատակների դպրոցների վրա, ստեղծելու կրթական հաստատությունների նոր ցանց, որին կարևոր դեր էր հատկացվում երկրի բոլոր բնակիչների գաղափարական ձուլման գործում»: Բանակ գորակոչված քրիստոնյաները դժոխային վիճակում էին: Մամուլի մասին 1865թ. հրապարակված օրենքով խստացվեց վերահսկողությունը թերթերի վրա, իսկ քաղաքացիության մասին օրենքով (1869թ.) բոլոր ազգություններին կոչեցին «օսմանյան պետության հպատակ»: Սակայն այս և մյուս ձեռնարկումները դժվարությամբ էին կյանք մտնում: Ալին խոստովանեց. «Մենք անգոր գտնվեցինք»:

Այս մտահանգմամբ էլ օսմաններն իրենց տեղը զիջեցին «նոր օսմաններին»: «Նոր օսմանների» կազմակերպական ձևավորումը տեղի ունեցավ 1865 թվին, երբ հիմնադրվեց նրանց ընկերությունը: Այդ ընկերության անդամներին անվանում էին նաև երիտասարդ թուրքեր: Դրանք էին գրողներ Նամրկ Վեմալը, Իբրահիմ Շինասին, Աբգուլ Զիան, հրապարակախոս Ալի Աուավին: Որոշ ժամանակ անց ընկերության գլուխ կանգնեց Ահմեդ Միդհատը: «Նոր օսմանները» ստեղծեցին լրագրության լայն ցանց: Նրանց թերթերը հրատարակվում էին հիմնականում Փարիզում ու Լոնդոնում և գաղտնի տարվում Թուրքիա:

«Նոր օսմանները» գտնում էին, որ Թանզիմաթը նվեր էր քրիստոնյաներին, որի հետևանքով մահմեդականները հայտնվեցին «ճնշված համայնքի վիճակում»: Այդ կապակցությամբ Ն. Իգնատևը տեղեկագրեց, որ «նոր օսմանները» կառավարությանը մեղադրում էին «մամեդական տարրերի շահերի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի մեջ»: Նրանք կատաղի պայքար էին մղում ազգային շարժումների դեմ: Նամրկ Քեմալը հռչակեց. «Մեր Մարգարեն աշխարհին ծառայել է իր սիրով: Մենք ևս պիտի ընթանանք այդ ուղիով... Աշխատենք ապացուցել, որ պատկանում ենք օսմանյան ժողովրդին, որն ամբողջ աշխարհին հարկադրում է դողալ իր առաջ... Գյավուրներին ցույց տանք մեր ուժը, Մարգարեին այդ հաճույք կպատճառի»:

Նրանք առանձնակի թշնամություն էին տածում Ռոասատանի հանդեպ: «Արևելյան հարցի այսօրվա վիճակը,-գրում է Ալի Աուավին հետևյալն է. Մոսկվան թունավորել է Օսմանյան կայսրությունում բնակվող քրիստոնյաներին օսմանյան կառավարությունը ոչնչացնելու, դիտավորությամբ»: Իբրահիմ Շինասին գտնում է, որ «Օսմանյան սուրը մագնիսական սլաքի նման միշտ դեպի հյուսիս է ցույց տալիս»:

«Նոր օսմանները» կայսրության փրկությունը տեսնում էին Սահմանադրության հռչակման մեջ, որն «անմիջապես կվերականգնե մահմեդական պետության հեղինակությունը...»:

Նրանք մշակեցին «օսմանյան ազգի» և «օսմանյան հայրենասիրության» կոնցեպցիաները, բնականաբար, օսմանյան ազգի մեջ ներառնելով կայսրության բոլոր ժողովուրդներին: Զիան գրեց. «Օսմանյան ազգ հասկացությունը նկատի ունի օսմանահպատակ բոլոր ժողովուրդներին...»: Ալի Սուլավին կայսրության բոլոր բնակիչներին համարում էր մեկ ժողովուրդ՝ կազմված 21 միլիոն մահմեդականից ու 14 միլիոն քրիստոնյայից: Միաժամանակ նրանք կայսրության բնակչությունը բաժանում էին երկու մասի՝ իսկական օսմանցիներ, այսինքն՝ թուրքեր, երկրորդական օսմանցիներ մնացած ժողովուրդները: Իսկական օսմանցի լինելու համար պարտադիր էր թուրքերեն իմանալը:

«Նոր օսմանների» կարծիքով Եվրոպան պարտական էր սուլթանին այն բանի համար, որ նրա «վերկռակցական կառավարման» շնորհիվ կայսրության տարբեր ազգային ու կրոնական համայնքներ խաղաղ գոյակցում էին: «Մեր երկրում ապրող բոլոր տարբերը, – գրում է Ն. Քեմալը, – աշխարհագրական առումով հանդիսանում են նույն մարմնի տարբեր մասերը... Դրա համար էլ լրիվ կորցրել են առանձին գոյություն ունենալու ընդունակությունը, նաև անկախության հասնելու համար անհրաժեշտ ուժերը»:

Կայսրության հարատևման նպատակով նաև առաջարկվում էր վերադառնալ Շարիաթին և իսլամի նախնական սկզբունքներին: Ն. Քեմալը գտնում էր, որ լեզուն է ապահովում ազգային համախմբվածություն, իսկ Ալի Սուլավին ավելացնում էր, որ թուրքերենը բոլոր լեզուներից վեր է: Նրանք երկուսն էլ դավաճանություն էին համարում կայսրության տարածքից թեկուզ մեկ թիզ կորցնելը:

Փոքր-ինչ այլ մոտեցում էր հանդես բերում Միդհատը: Նա ճանաչում էր հպատակ մի քանի մահմեդական ժողովուրդների արդեն ձեռք բերած անկախությունը, հպատակների ներքին ինքնավարությունը համարում էր կայսրության ամբողջականությունը պահպանելու միջոց: Միդհատը ևս ձուլման կողմնակից էր և այդ գործում մեծ տեղ էր հատկացնում մահմեդա-քրիստոնեական կազմով խառը գնդերի ստեղծմանը: Նա համաձայնեց սահմանադրության մեջ կետ մտցնել, որ կայսրության կազմում եղած ժողովուրդներն իրավունք ունեն օգտագործելու մայրենի լեզուն, ինչին դեմ դուրս եկավ սուլթան Աբդուլլ Համիդը, և պետական լեզու հռչակեց թուրքերենը, իսկ պետական կրոն իսլամը:

«Նոր օսմանների» նպատակները շարադրված են շարժման հիմնադիրների հռչակագրի նշանակություն ստացած հետևյալ գրություններում. 1867թ. Ֆազլըլը Փարիզում հրապարակեց իր նամակը սուլթանին, որում կարդում ենք. «Ձեր տերության հպատակ քրիստոնյաների ապստամբությունները ամբողջովին արդյունք են մեր արտաքին թշնամիների բանսարկությունների: Դրանում զգալի դեր է խաղում նաև ներկա կառավարումը: Առանց բացառության, բոլոր հպատակները ենթակա են հալածանքների ու ճնշումների, իսկ Եվրոպան գտնում է, որ հալածվում ու ճնշվում են

միայն քրիստոնյաները: Մինչդեռ, որևէ արտաքին հովանավորության չդիմող մահմեդականներն ավելի են ճնշվում, քան ոչ մահմեդականները»: Մահմեդականներն «այլևս ո՛չ ուժ, ո՛չ համբերություն և ո՛չ էլ անձնագոհություն ունեն ցավն ու դժբախտությունը տանելու», դրա համար էլ ամենուրեք դժոհություն է: Ժողովուրդը ամենաշատը կեղեքվում է չինովնիկների կողմից, որոնք գործում են առանց որևէ վերահսկողության, և նրանց կամայականությունների դեմ որևէ արգելք չկա: «Դրա համար էլ Ձեր հպատակները բաժանվում են երկու խմբի: Մի խումբն անսանձ բռնապետներ են, մյուսը ճնշվածներ, որոնք տանջվում են առաջինների կամայականություններից»:

Նա կայսրության ֆինանսական ծանր վիճակի պատճառը համարում էր հարկերի գանձման գործում կամայականությունները, որոնք քայքայում են բնակչությանը: «Արհեստը, առևտուրն ու գյուղատնտեսությունը օրավուր կրճատվում են», ինչը հետևանք է «մեր համակարգի քաղաքացիական կառավարման անիրավության»: Նա սուլթանին կոչ էր անում ստեղծել այնպիսի «ազատ կարգեր», որպեսզի թե մահմեդականների և թե ոչ մահմեդականների համար ապահովվեն անձի ազատություն և ունեցվածքի անվտանգություն:

1867թ. փետրվարի 12-ին դիվանագետ Խալիլ Շերիֆը Պոլսում թռուցիկ տարածեց սահմանադրական կարգեր հաստատելու անհրաժեշտության մասին: Մահմանադրությունը, ասվում է թռուցիկում, կջնջի «մահմեդականների և ոչ մահմեդականների միջև եղած քաղաքական ու սոցիալական տարբերությունը: Ոչ մահմեդականի համար կվերանա անհրաժեշտությունը լսելու դրսի կեղծ խոստումները...»:

«Նոր օսմանների» գաղափարախոսության հռչակագիր հանդիսացավ նշանավոր պետական գործիչ, բազմիցս մեծ վեզիրի և արտաքին գործերի նախարարի պաշտոններ վարած Ֆուադի քաղաքական կտակը: Այդ նշանավոր փաստաթղթի ծնունդը պայմանավորված էր Ֆուադի եզրահամգմամբ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է»: Իսկ ինչու էր վտանգի մեջ: «Մեր հարևանների ձեռք բերած սրընթաց առաջադիմությունը և մեր նախահայրերի գործած սխալներն այսօր մեզ դնում են չափազանց տագնապալի կացության մեջ: Այդ կացությունից դուրս գալու ելքը մեկն է հաղթահարել հետամնացությունը, այսինքն վերացնել այն տարբերությունը, որն առաջացել է Եվրոպայի և Թուրքիայի զարգացման մակարդակների միջև: Ուրեմն, Ֆուադը ջատագովում էր ոչ միայն առաջադիմությունը, զարգացման արագացումը, այլև եվրոպական, այսինքն կապիտալիստական ուղին: Դրա համար էլ նա, նախ առաջարկում էր փոխել «բոլոր քաղաքական և քաղաքացիական հաստատությունները», քանի որ անցյալի նույնիսկ շատ լավ օրենքները նոր պայմաններում վերածվել են զարգացման խոչընդոտների: Երկրորդ, մարդկության զարգացման օրինաչափություններն ընդհանուր են թե՛ Եվրոպայում և թե՛ Օսմանյան կայսրությունում, հետևաբար համարձակորեն պետք է օգտագործել եվրոպական արժեքները թուրքական հասարակության զարգացումն արագացնելու համար,

մանավանդ որ եվրոպական առաջադիմության մեջ մահմեդական «կրոնի ոգուն հակառակ ոչինչ, բացարձակապես ոչինչ չկա»:

«Նոր օսմանների» առաջ քաշած բոլոր ծրագրերի հիմքում ընկած էր օսմանիզմը: Թուրքիզմի նախակարապետ հանդիսացող այդ գաղափարախոսությունը խնդիր էր առաջադրում ապահովելու կայսրության տարածքային ամբողջականությունը և ծնվեց որպես օսմանյան քաղաքական համակարգը մարմնավորող ուսմունք: Օսմանիզմի գաղափարական ակունքները ձգվում են մինչև կայսրության ձևավորման առաջին տասնամյակները: Դրանց հիմքում դրված են այն գաղափարները, որ Օսմանյան կայսրությունը նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների հայրենիքն է, և բոլոր ժողովուրդները, անկախ իրենց լեզվից ու դավանանքից, օսմանցիներ են՝ օսմանի:

Օսմանիզմը վեր ազգային կայսրության պայմաններում առաջին հայացքից ընկալվում է որպես կայսրության մեջ մտնող ժողովուրդների իրավահավասարությունը հաստատող ուսմունք: Սակայն միայն առաջին հայացքից: Իրականում այն թուրքական ուսմունք է՝ կոչված ապահովելու թուրքերի գերիշխանությունը հպատակ ժողովուրդների վրա: Կայսրության ժողովուրդների թե՛ իրավունքները և թե՛ պարտականությունները խստորեն համակարգված էին ըստ քաղաքական վիճակի, ազգային և կրոնական պատկանելության: Օսմանիզմը կայսրության միասնական օրգանիզմի գլուխ համարում էր թուրքերին, մարմին՝ արաբներին, քրդերին, ալբանացիներին, մահմեդական մյուս հպատակ ժողովուրդներին, իսկ ոտքերն ու ձեռքերը այլադավաններին՝ հիմնականում քրիստոնյաներին: Թուրքերն էին կայսրության միջուկը՝ տիրելու անվերապահ իրավունքներով: Մահմեդական հպատակները համարվում էին թուրքերի հենարաններ: Մնացածները ռայա էին՝ զրկված բոլոր իրավունքներից:

«Օսմանցիներից,- գրում է Նամըկ Քեմալը,- թե՛ թվով և թե՛ ընդունակություններով առաջին տեղը գրավում են թուրքերը, որոնք ունեն այնպիսի առավելություններ, արժանիքներ ու որակներ, ինչպիսիք են ճանաչողական ընդունակություններն ու լայնախոհությունը, բնածին զսպվածությունը, դիմացկունությունն ու խոհեմությունը»

«Նոր օսմանների» ազգային այս սնապարծությունն անտեղի էին համարում նաև շատ թուրք մասնագետներ, իսկ Շերիֆ Մարդինի կարծիքով թուրքերի նման փառաբանությամբ դժվար էր կայսրության մյուս ժողովուրդներին համոզել, որ «նոր օսմանների» քարոզած ապագա պետությունում իրենք կունենան նույն իրավունքները, ինչ թուրքերը: Ահա մեծապետական մտածողության հետևանքով էր, որ օսմանիզմի շատ պարագլուխներ, այդ թվում նաև Ն. Քեմալը, աստիճանաբար մերձեցան պանիսլամիզմին: Ըստ այդ տեսաբանների, կայսրությունում կար միայն մեկ ազգ օսմանյան (թուրք), իսկ օսմանահպատակ ժողովուրդները լոկ «տարբեր» էին, «բաղկացուցիչ մասեր», որոնք ոչ սուվերեն գոյության և ոչ էլ ազգային պետություն ունենալու իրավունք չունեին: Հետևաբար այդ ժողովուրդների ազատագրական

պայքարն այլ բան չէր, եթե ոչ դավաճանություն: Ահա թե ինչու «նոր օսմանների» ուղղակի ժառանգը դարձան երիտթուրքերը:

«Նոր օսմանները» հարկադրված էին առաջին պլան մղել նաև տնտեսական կյանքի բարեփոխումն ու հետամնացության հաղթահարումը: Դա նշանակում էր հրաժարվել ավատատիրական կարգերից և բռնել զարգացման եվրոպական ուղին դեն նետելով գոյություն ունեցող վարչակարգի ծնած այլանդակությունները հարկային համակարգը, ուշադրությունը բնեռել անգրագիտության և տգիտության հաղթահարմանը, լրասավորության եվրոպական փորձի ներդրմանը, հաղորդակից դառնալ արևմտյան քաղաքակրթությանը: Նրանք առանձնակի նշանակություն էին տալիս թուրք բնակչության լրասավորության գործին նաև այն պատճառով, որ կայսրության ոչ մահմեդական ժողովուրդները կրթական-մշակութային զարգացման մակարդակով շատ առաջ էին թուրքերից և մյուս մահմեդական ժողովուրդներից: Ընդ որում, «նոր օսմանները» դա բացատրում էին կայսրությունում քրիստոնյա ժողովուրդներին տրված արտոնություններով՝ նկատի ունեին միլիթների համակարգը: Մակայն դա նշանակում էր միայն կրթական-լուսավորչական աշխատանքի թույլտվություն, այլ ոչ թե հնարավորություն: Օսմանյան կայսրությունում նյութական աջակցություն և պետական հովանավորություն ստանում էին միայն մահմեդական դպրոցները, քանի որ քրիստոնյա ժողովուրդների պետական դպրոցներ գոյություն չունեին: Հայկական դպրոցներն իրենց գոյությունը պահում էին հանգանակված միջոցներով: Դեռ ավելին, քրիստոնյաներից գանձվում էր դպրոցների տուրք, որը, սակայն, ծախսվում էր միմիայն մահմեդական դպրոցների վրա:

Իհարկե, «նոր օսմաններին» իրողությունը քաջ հայտնի էր, բայց թուրքական շովինիզմի այդ ներկայացուցիչների քաղաքական ծրագրերի իրականացման հնարավորությունները խարսխված էին քրիստոնյա հպատակների հանդեպ թուրքերի մեջ ատելության հրահրման վրա: Ընդ որում, օսմանիզմի ձևավորումն ընթանում էր թուրք ազգի ձևավորմանը զուգընթաց և ներկայացնում էր այդ գործընթացի ազգայնամոլական արտահայտությունը: Օսմանլին արդեն իրեն ոչ միայն թուրք էր զգում, այլև առաջին պլան էր մղում, բացարձականացնում թուրք ազգի հատկությունները, նրա ազգային դեմքը ձևավորող գործոնները: Մասնավորապես, մեծ ուշադրություն էր հատկացվում թուրք լեզվի դիրքերի ամրապնդմանը. մահմեդական ծիսակատարությունները, որոնք մինչև այդ արաբերեն էին, սկսեցին կատարվել թուրքերեն:

Նամըկ Քեմալը 1872 թ. գրեց. «Օսմանյան պետությունը հիմնված է կրոնական սկզբունքի վրա և, եթե այդ սկզբունքը խախտվի, կվտանգվի պետության քաղաքական գոյությունը»: Նրա կարծիքով սահմանադրության յուրաքանչյուր հոդված պետք է հաստատվեր շեյխ ուլ-խալամի կողմից, որ մահմեդական կրոնը անհաղթահարելի պատնեշ է Եվրոպայի ոտնձգությունների դեմ: Օսմանիզմի հիմքում դնելով իսլամը «նոր օսմանները» ձգտում էին հավերժացնել սուլթան-խալիֆի կայսրական տիրակալությունը, միավորել լազերին, ալբանցիներին, արաբներին ու քրդերին:

Այսինքն, օսմանիզմը իսլամիզմի ծնողն էր: Բայց ոչ միայն իսլամիզմի, այլև պանթուրքիզմի: Այլի Սուլվին գրում է, որ իրենց քաղաքական, ռազմական, պատմական ու մշակութային դերով թուրքերն ամենաին և ամենաբարձրագույն ռասան են, իսկ թուրքերենն ամենահարուստ ու ամենակատարյալ լեզուն է: Նա մեծ հետաքրքրություն էր դրսևորում Միֆին Ասիայի թուրքալեզու ժողովուրդների հանգեպ, ասելով, թե իրեն հուզում է այդ թուրք մահմեդականների բախտը, որոնք «հարում են մեր կրոնին, պատկանում են մեր ցեղին ու մեր ընտանիքին»:

«Նոր օսմաններն» անգլիական կողմնորոշում ունեին: Ն. Քեմալը «Հուլիեթի»-ի 1868թ. նոյեմբերի 23-ի համարում գրում է. «Եվրոպական պետություններից Անգլիան է ամենաշատը աջակցում մեր իրավունքների պաշտպանությանը և սուլթանի իշխանության պահպանմանը»: Իսկ Ջիան նկատում է. «Եվրոպացիները Օսմանյան կայսրության վրա նայում են ինչպես հանգուցյալի վրա... Այնուամենայնիվ, նրանք ձգտում են պահպանել այդ դիակը ահաբեկված Ռոասստանի կողմից Ստամբուլը գրավելու սարսափից, նաև նրա համար, որ չեն գտնում մի այլ բան հանգուցյալի տեղը դնելու համար»:

«Նոր օսմանները» միաժամանակ ձգտում էին մահմեդական կրոնի սկզբունքները համատեղել գիտության նվաճումների հետ, գտնելով, որ իսլամի ակունքներում ժողովրդի պատմական փորձն է, որը չի հակասում գիտության նվաճումներին: Արևմտականության այդ ջատագովները չէին նկատում, որ կրոնի նկատմամբ վերաբերմունքի հարցում իրենք հակադրվում էին եվրոպական մոտեցումներին: Եթե Եվրոպայում ֆեոդալիզմի դեմ բուրժուազիայի պայքարի սուր ծայրն ուղղված էր կղերի դեմ, ապա «նոր օսմանները» հանձինս կրոնակցի տեսնում էին դաշնակցի:

Կայսրությունում ծավալված ազգային-ազատագրական շարժումների համայնապատկերի վրա «նոր օսմանները» որդեգրեցին բացարձակ ազգայնամուլական այլամերժ գաղափարներ, որոնք առաջին անգամ ամենայն որոշակիությամբ ձևակերպվեցին Ֆուադի կտակում: Նա սուլթան Աբդուլ Ազիզին խորհուրդ էր տալիս դաժանորեն ճնշել ազգային-ազատագրական շարժումները: Միայն էր համարում Հունաստանի անկախության ճանաչումը՝ գտնելով, որ Հունաստանն «ինքնին ամենակարևոր երկիրն է, բայց ձանձրացուցիչ գործիք թշնամի պետությունների ձեռքում: Եվրոպացի բանաստեղծները, կազմելով այս ուրվական թագավորությունը, կարծեցին, թե կարողանալու էին վերակենդանացնել մի ազգի, որը մեռել է ավելի քան երկու հազար հինգ հարյուր տարի առաջ»: Նա հույների հասցեին շարտում էր վիրավորանքներ «նենգավոր և չարասիրտ, սնափառ, ատելի»: Նրա կտակում նման «բնութագրություններ» են շոյվված օսմանյան բոլոր ոչ մահմեդական ժողովուրդների հասցեին:

Ֆուադը հայերին անդրադառնում է մի քանի անգամ: «Բ. Դուռը երբեք չպետք է ների որևէ մեքենայություն, որը նպատակ է հետապնդում ստեղծելու Հայ և օրթոդոքս եկեղեցիների միություն»: Ապա «մասնավորապես հայերը հակված են ոտնձգության և խելացի կլինի նրանց եռանդը չափավորել... Մի Սոնթենեգրո, մի սերբական

իշխանություն, մի հայկական թագավորություն ամենափոքր օգուտ չտալով ո՛չ իրենց և ո՛չ մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հասարակության հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի անխուսափելի որս՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»

Ազգային հարցում Ֆուադի կտակի դրույթները փաստորեն դարձան սահմանադրական շարժման ծրագրային սկզբունքներ: Դրանք բացառում էին կայսրությունում ազգային և կրոնական շարժումները, մերժում հպատակ ժողովուրդներից որևէ մեկին անկախություն տալու գաղափարն իսկ և պահանջում արյան մեջ խեղդել նման ամեն մի փորձ: Ընդ որում, ազգային շարժումները պիտակավորվում էին, մասնավորապես համարվում մեծ տերությունների բանասարկությունների հետևանք, գոյության իրավունքից զուրկ «ավազակություններ»: «Նոր օսմանները» սուլթանական կառավարությանը քննադատում էին ոչ թե հպատակ ժողովուրդներին ճնշելու, հարստահարելու, բռնությունների ենթարկելու, այլ նրանց ազատագրական շարժումները չխեղդելու և մի քանիսին անկախություն տալու համար: Իր «Թուրքիան, նրա անցայլն ու ապագան» (Փարիզ 1878թ.) գրքում Միդհատն այն միտքն է արտահայտում, թե Օսմանյան տիրապետությունը ոչ թուրք ժողովուրդների համար իսկական բարիք է եղել ու այդպիսին մնում է, քանի որ մշտապես գտնվել են սուլթանների ողորմածության, նրանց արդար ու անկողմնակալ վերաբերմունքի ներքո, զերծ ճնշումներից ու խտրականությունից: Եվ ապստամբում էին ոչ թե հալածվելու պատճառով, այլ որովհետև կույր գործիք էին Ռուսաստանի ձեռքին: Նա գտնում էր, որ Մուղղավային, Վալախիային և Սերբիային անկախություն տալը սուլթանների անթույլատրելի սխալն էր, որ ժողովրդավարությունը չի կարող հավասարապես տարածվել մահմեդականների ու քրիստոնյաների վրա: Թուրքական ժողովրդավարությունը կոչված է ծառայելու թուրքերին: Նա վիրավորական արտահայտություններ է օգտագործում իր այն գործընկերների հասցեին, ովքեր «քրիստոնյաների հանդեպ զիջողականություն էին հանդես բերում» և «ոտնահարում էին Շարիաթի դոգմաները»: Բուլղարիայում Միդհատին կոչում էին «բուլղարացիների դահիճ»:

Սա թուրքական նոր ձևավորվող հասարակական վերնախավի երկրորդ սկզբունքային տարբերությունն էր եվրոպական բուրժուազիայից: Եթե վերջինս հասարակությունը վերափոխելու պայքարի շրջանում ընդունում էր ազգերի ազատագրության և անկախության սկզբունքը, ապա թուրք սահմանադրականները դրա կատաղի թշամիններն էին, ջատագովը օսմանյան միասնական հայրենիքի: Միդհատի հեղինակած «Միասնական երկիր միասնական ժողովրդով» կարգախոսը դարձավ սահմանադրական շարժման հիմնական նշանաբաններից: Աստիճանաբար «օսմանյան համայնք» հասկացությունն իր տեղը զիջեց «օսմանյան ժողովուրդ» հասկացությանը և դա ոչ թե բառի փոփոխություն էր, այլ թուրք ազգի, թուրքական ազգայնամոլության ձևավորման արտահայտություն: Պատահական չէ, որ Աչի Աուլալին օգտագործում էր նաև. «օսմանյան ազգ» հասկացությունը:

Սահմանադրականների շովինիստական գաղափարներն ու քաղաքականությունը էլ ավելի խորագրեցին խորթությունը թուրք և հպատակ ժողովուրդների միջև, խափանեցին նրանց համատեղ պայքարը սուլթանական վարչակարգի դեմ: «Նոր օսմանների» գաղափարախոսության արատավոր կողմերն էլ պատճառ. հանդիսացան այդ շարժման արագ վերասերման: Պատահական չէ, որ շուտով օսմանիստները փարվեցին իսլամիզմին: Նրանք կայսրության ամբողջականությունը տեսնում էին առանց ոչ մահմեդական ժողովուրդների և նպատակադրվել էին մահմեդականներին միավորել հանուն կայսրության մահմեդականացման: Սակայն այս հանգրվանում ևս նրանք կանգ չառան և առաջին պլան մղեցին թուրք ռասային, որի փառաբանումը, նրան որպես ամենահնագույն, ռազմաքաղաքական և մշակութային առումով ամենաբարձր, մարդկային քաղաքակրթության գանձարանում ամենամեծ ներդրում կատարած ռասայի հռչակումը վերածվեց մահմեդական հիմնարար կարգախոսների համարժեք սկզբունքի: Դրանով է բացատրվում սահմանադրականների կողմից Լամարթինի փառաբանումը, որը թուրքերին կոչ էր անում չթուլացնել կրոնական մոլեռանդությունը, քանի որ դրա շնորհիվ էր պահպանվում Օսմանյան կայսրությունը, «այլապես հույներն ու հայերը գլուխ են բարձրացնելու»: «Թուրքերը,- գրել է այդ «վերամբարձ սրիկան», -արևելյան ժողովուրդների շարքում առաջին տեղն են գրավում: Թե՛ իբրև մարդ և թե՛ իբրև ազգ նրանք ազնվագույնն են... այդպիսի ցեղը մարդկությանը միայն պատիվ է բերում»:

Դարեր շարունակ թուրքի համար գլխավորը եղել է ոչ թե բնակչությունը, մարդը, այլ տարածքը: Նա տարածքներ է նվաճել, այլ ոչ թե ժողովուրդներ, որոնց զգալի մասին ոչնչացրեց, որովհետև խանգարում էին վարչկատուն ապրելակերպին: Նախկինում «նվաճված տարածքներից զրկվել» արտահայտությունը թուրքի համար բառացի նշանակություն ուներ: Տարածքի կորուստ նշանակում էր այդ տարածքի վրա բնակվող մահմեդականների ոչնչացում կամ արտաքսում, ինչպես դա կատարվեց Բալկաններում:

Քրիստոնյա հպատակների հանդեպ թուրքերի վրեժխնդիր ասելությունը սնող աղբյուր էին մուհաջիրները, ովքեր իրենց նախկին բնակավայրերից հեռացել էին հիմնականում քրիստոնյաների (իշխանության, թե բնակչության) հետ բարդ հարաբերությունների հետևանքով: Կովկասյան լեռնականներն իրենց օթախները լքում էին քաղաքական ճնշումների, իսկ բալկանյան երկրների մահմեդականները հալածանքների պատճառով: Մուհաջիրների շրջանում իրենց նկատմամբ ոտնձգություններ կատարած քրիստոնյաների հանդեպ ասելությունը վերածվում էր Օսմանյան կայսրության կազմում եղած քրիստոնյաների հանդեպ վրեժխնդրության: Սուլթանն ու Բ. Դուռը գա քաջ գիտեին և, ինչպես Թ. Ակչամն է գրում, մուհաջիրներին «գիտակցաբար բնակեցնում էին քրիստոնյա բնակչություն ունեցող տարածքներում: Ստեղծվում էին ընկերություններ, թերթեր ու հանդեսներ, որոնց միջոցով այդ փախստականներին մշտապես հիշեցնում էին իրենց կրածի մասին ու

վրեժխնդրության կոչում... Այս ողորմելի մարդիկ շուտով դառնալու էին Անատոլիայի ազգային փոքրամասնությունների և, առաջին հերթին, հայերի դահիճները»:

1878–1904թթ. համախումբ հայ բնակչություն ունեցող վիլայեթներում միաժամանակ բնակեցվեց 850 Հազար փախստական: Դժվար է հավատալ թ. Ակչամի բերած թվին ու պնդմանը, թե նրանք հանդիսացան հայերի դահիճները: Նախ, Բալկաններից եկած մուհաջիրների չնչին մասն էր բնակեցվում Արևմտյան Հայաստանում: Այստեղ հիմնականում վերաբնակեցվում էին Կովկասից ու Անդրկովկասից եկած գաղթականները: Այս մուհաջիրները թշնամաբար էին տրամադրված հայերին և մասնակցել էին նրանց թալանին ու կոտորածներին, սակայն նրանք չէին կոտորածների գլխավոր ուժը: Կեղծիք են նաև Ք. Աթաթուրքի խոսքերը. «Գաղթականները կորցրած հողերի մասին մեր ազգային հիշողությունն են»:

Իրադարձությունների մասնակից, Թուրքիայի գաղտնի ոստիկանության պետ Մ. Հաջեթլաշեն իր «Մարդասպանը գահի վրա» հուշագրությունում, որը 1918 թ. լույս է տեսել Պետրոգրադում, պատմում է նման չերթեզներից մեկի Ահմեդի մասին, որը Թուրքիա էր գնացել ոտաբոբիկ, սակայն կարճ ժամանակում դարձել էր Աբդուլ Համիդի ամենամերձավոր մարդը: Նրանից երկնչում էին անգամ նախարարները: Ահմեդը քչերից մեկն էր, որ ծանր պահին չլքեց սուլթանին:

Մի ուրիշ լեռնականի լազի մասին, որը Վանի վալին էր՝ Բահրին, նա պատմում է, որ մի անգամ պալատում նա իր երեսին շարտել է. «Լրտե ս, լսի՛ր, քո անասուններին կարգադրի՛ր, որ ավելի զգույշ լինեն, թե չէ ես ոչ միայն նրանց, այլ նաև քեզ ստահակիդ, այն աշխարհ կուղարկեմ... Լավ հիշիր, որ լազն իր սպառնալիքը չի կրկնում»: Հետևում է պատասխան. «...Եթե դուք հեշտությամբ մորթում եք անմեղ հայերին, ապա դա չի նշանակում, որ կարելի է ծաղրանքի ենթարկել փառիշահի ծառաներին...»: Բահրիի իրականացրած խոշտանգումներից մեկի մասին նա գրում է սուլթանին: «Բանտախցիկներից մեկում պահվում էին 15 հոգի, դռան առաջ մի տակառ էր դրված լեփ-լեցուն երկար մեխերով: Դռան մոտ կանգնած էին հրացանավոր զինվորներ, ովքեր բանտարկյալներին մեկառմեկ դուրս էին բերում», մերկացնում ու «նետում տակառի մեջ: Զնդանն անմիջապես լցվում էր սարսափելի վայնասունով»: Սակայն աշխատողները սառնասրտությամբ «տակառը թեքում էին աջ ու ձախ, մեխերը մտնում էին դժբախտների մարմնի մեջ, և արյունը հոսում էր գետին: Երբ ճիչերը լռում էին, տակառից հանում էին լաթի վերածված բանտարկյալին տասը բոպեում նրա ամբողջ արյունը դուրս էր հոսում»: Ապա Բահրին հրամայեց բերել «բանտարկյալների քույրերին, և մյոա բանտարկյալների աչքի առա՛ լազերը սկսեցին ծաղրել մերկացրած աղջիկներին... Չորս աղջիկ բռնաբարվեցին նահանգապետի ներկայությամբ... շատ եմ խնդրում... նամակս ոչնչացնել, թե չէ ինձ կկասկածեն հայերին համակրելու մեջ, թեպետ ես ամենահավատարիմ մահմեդականն եմ»:

Երբ բանտ այցելեցին հյուպատոսները, Բահրին սպանվածների մասին ասաց, թե ազատ են արձակված, իսկ մյուսները շուտով կկանգնեն դատարանի առաջ:

«Նոր օսմանները» կորցրած հողերի համար վրեժխնդրության գաղափարը շարունակեցին պահել «ռազմական ուսումնարանների ուսումնական ծրագրերի հիմքում...»: «Հարկ է խոստովանել,-գրում է Թ. Ակչամը,-որ ռազմատենչության և ագրեսիվության ոգին ներառել էր ոչ միայն ուսումնարանները, այլև ամբողջ հասարակությունը»: Սակայն թուրք պատմաբանը լռությամբ է անցնում այն իրողության կողքից, որ թուրքիզմը «դեն նետած» Աթաթուրքի համար «կորցրած հողերի մրմուռը» ի վերջո վերածվեց Թուրքիայի Հանրապետության քաղաքականության հիմնարար ուղղության: Իրականությունը հետևյալն էր: Կործանվող կայսրության համար ազգային-ազատագրական շարժումները, համարվելով մահացու, ճնշվում էին արտակարգ դաժանությամբ: Դրանց վտանգի արհեստական ու միտումնավոր չափազանցումը լայն զանգվածներին մղեց վայրենի գործողությունների: Ահա այդ բոլորի հաշիվը ներկայացվեց հայերին, և երբ ձևավորվեցին հայկական շարժումները, անկախ դրանց նպատակադրումից, թուրքական իշխանությունները ոչ թե մի կողմ կանգնեցին, այլ «երեխային խեղդեցին օրորոցում»:

Այսպիսով, «նոր օսմանների» քարոզած գաղափարները հիմք հանդիսացան ոչ միայն իսլամիզմի, պանիսլամիզմի, այլև թուրքիզմի և պանթուրքիզմի ձևավորման համար:

«Նոր օսմանների» կողմնորոշումները հետևանք էին օսմանիզմի կենսունակության հանդեպ վստահության խաթարման: Նրանք հավատացած չէին, որ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման խնդրում հպատակ ոչ թուրք մահմեդականները շահագրգռվածություն ունեին, և նաև այդ պատճառով միակ վստահելի տարրը համարում էին թուրքերին:

«Նոր օսմանների» գործունեության բարձրակետը հանդիսացավ Միդհատի գլխավորությամբ 1876թ. մայիսի 30-ին կատարված պետական հեղաշրջումը, երբ գահընկեց արվեց Աբդուլ Ազիզն ու գահ բարձրացան սկզբում Մուրադ 5-րդը» ապա Աբդուլ Համիդ 2-րդը: Վերջինս Հարկադրված եղավ ընդունել Միդհատի և Նամըկ Քեմալի մշակած սահմանադրության նախագիծը: Այդ սահմանադրությամբ Օսմանյան կայսրությունը վերածվում էր միապետական-խորհրդարանական պետության, կայսրության բոլոր քաղաքացիները, անկախ կրոնական պատկանելիությունից, համարվում էին իրավահավասար: Հռչակվում էր «Ազատություն, եղբայրություն, հավասարություն» սկզբունքը որպես Ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարներին նվիրվածության արտահայտություն:

1877թ. ամռանը բացվեց օսմանյան առաջին խորհրդարանը, որի 119 անդամներից 48-ը քրիստոնյա, այդ թվում հայեր էին: Խորհրդարանում խիստ քննադատություն ծավալվեց սուլթանական վարչակարգի հասցեին, ընդունվեցին մի քանի առաջադիմական օրենքներ:

Այդ վիճակն Աբդուլ Համիդը երկար չհանդուրժեց: Շուտով մեծ վեզիրը պաշտոնից հեռացվեց, Միդհատն աքսորվեց, սահմանադրական շարժման ղեկավարները բանտ նետվեցին: 1878թ. փետրվարին ցրվեց խորհրդարանը, արգելվեց

սահմանադրությունը: Կայսրությունը բռնեց բացարձակ միապետության վերածվելու ուղին: «Նոր օսմանները», որպես քաղաքական հոսանք, դադարեցին գոյություն ունենալուց:

Պանթուրքիզմ. Երիտթուրքական կուսակցության ու վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության առանցքը դարձավ պանթուրքիզմը: Երիտթուրքերի ազգայնամոլական գաղափարախոսության նպատակն էր համախմբել թուրքալեզու բոլոր ժողովուրդներին մեկ միասնական թուրքական պետության՝ Մեծ Թուրանի մեջ: Ըստ էության ստեղծվելու էր թուրքալեզու Արևելյան կայսրություն, որն ընդգրկելու էր Բոսֆորից մինչև Չինաստան և Սառուցյալ օվկիանոս ընկած տարածքները:

Ընդունելով պանթուրքիզմի գաղափարախոսությունը՝ երիտթուրքերը գնացին ազգային հիմնախնդիրները, առաջին հերթին Հայկական հարցը ամենավայրագ ու բարբարոսական եղանակներով լուծելու ճանապարհով:

Երիտթուրքական հեղաշրջումը և դրան հաջորդած ժամանակաշրջանը իսկական փորձություն էր հայ ազգային քաղաքական ուժերի համար: Իրադարձությունների զարգացմանը համընթաց փոխվում էին նրանց ծրագրերն ու մարտավարությունը: Քաղաքական ասպարեզ մտան նաև ազգային նոր կազմակերպություններ: Դրանցից էր 1908 թ. հոկտեմբերի վերջին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում ստեղծված Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Ռամկավար կուսակցությունն իր ծրագրում նշում էր, որ հեղափոխական կուսակցությունների գոյության անհրաժեշտություն այլևս չկա: Ռամկավարները գործում էին գլխավորապես Վան-Վասպուրականում, որտեղ կուսակցությանն անդամագրվեց նախկին արմենականների զգալի մասը:

1908-1914 թթ. հայ քաղաքական կուսակցությունների պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջանն էր, երբ լիովին բացահայտվեց երիտթուրքական իշխանությունների իրական դեմքը: Դաշնակցությունը դադարեցրեց համագործակցությունը երիտթուրքերի հետ: Փաստելով արևմտահայության կացության աստիճանական վատթարացումը՝ կուսակցությունը Հայկական հարցի լուծումը նորից կապեց մեծ տերությունների, առաջին հերթին Ռուսաստանի աջակցության հետ: Երիտթուրքերի կուսակցության Իթթիհատի պանթուրքական քաղաքականության դեմ պայքարի բացահայտ ճակատ բացեց նաև Հնչակյան կուսակցությունը, որը միշտ անվստահություն էր տածում նրա նկատմամբ՝ թե՛ նախկինում և թե՛ իշխանության գալուց հետո: Այդ էր պատճառը, որ նա երիտթուրքերի կողմից ենթարկվում էր հետապնդումների: 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ կրկին արժարծվեց Հայկական հարցը, երիտթուրքերը Հնչակյաններին առաջարկեցին բանակցություններ սկսել հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու շուրջ: Բայց Հնչակյանները մերժեցին առաջարկը և բանակցություններ սկսելու նախապայման համարեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության սկզբունքի ընդունումը:

Այսպիսով, հայ ազգային քաղաքական կուսակցությունները համոզվեցին, որ պանթուրքիզմը դարձնելով պետական քաղաքականության առանցք երիտթուրքերը շարունակում են հայերին ոչնչացնելու աբդուլհամիդյան ծրագիրը: Հայ ազատամարտի ղեկավար ուժերը նորից փոխեցին իրենց մարտավարությունը և վերսկսեցին պայքարը Հայկական հարցի լուծման համար:

Իսլամիզմ-Պանիսլամիզմ. Սուլթան Աբդուլ Համիդը օսմանիզմը ոչ միայն չէր ընդունում, այլև գտնում էր, որ դրա հիմքում դրված հավասարության գաղափարը վիրավորում է մահմեդականների արժանապատվությունը: Այդ սուլթանն իսկական թուրք էր, թուրքի ջատագով, թուրքիստական գաղափարների նվիրյալ: Միաժամանակ նա լավ հասկանում էր, որ տնտեսապես քայքայված, ազգային ամենախայտաբղետ կազմ ունեցող, ներքին և արտաքին հակա-սուլթաններից ծվատվող բազմազգ կայսրությունը չի կարող գոյություն ունենալ առանց միավորող գաղափարի: Այդ միավորող գաղափարը համարվեց իսլամը, որի հիմնական կարգախոսներից մեկը «Բոլոր մահմեդականները եղբայրներ են և պիտի միավորվեն», դարձավ պանիսլամիզմի նշանաբանը և առաջին հերթին ուղղվեց կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների դեմ: Սակայն իսլամը հայրենիք հասկացություն չէր պարունակում, իսկ առանց հայրենիքի գաղափարի միավորումն անհնար էր: Ուստի Համիդը «նոր օսմաններից» փոխ առավ նրանց սկզբունքներն օսմանյան հայրենիքի վերաբերյալ: Իսլամի և օսմանյան հայրենիքի գաղափարի միավորումը հող նախապատրաստեց մահմեդական բնակչություն ունեցող պետության ստեղծման համար, որում նույնպես գերիշխողը հանդիսանալու էին թուրքերը: Այսինքն, Համիդը ձգտում էր տարակային կորսուստներ տալու միիցով ստեղծել թուրքական պետություն: Նրա քաղաքականությունը խնդիր էր հետապնդում, մահմեդականներին արտոնություններ տալով նրանց առաջատար դարձնել տնտեսական կյանքում, ձևավորել թուրք պաշտոնատարների ու մտավորականության նոր խավեր, որոնք ունենային եվրոպական կրթություն և մահմեդական մոլեռանդություն:

Խնդրի լուծումն ապահովելու համար լայն թափ հաղորդվեց մահմեդականության արմատավորմանն ու տարածմանը: Մեծ գործ կատարվեց կրոնական գրականությունը թուրքերեն թարգմանելու ուղղությամբ:

Իսլամի հանդեպ ուշադրությունը բացատրվում էր մահմեդականության առանձնահատուկ նշանակությամբ իսլամական աշխարհում, այն մեծ դեր էր խաղում կայսրության ամբողջականության պահպանման գործում: Քաղաքականության և կրոնի միասնությունը ի սկզբանե հատուկ էր իսլամին: Կրոնական առաջնորդը միաժամանակ պետության գլուխն էր, օսմանյան պետական կառուցվածքը աշխարհիկի և հոգևորի ձուլվածք: Կատարվեց իշխանության «իսլամացում», հետևողականորեն շեշտվում էր մահմեդական կրոնական հաստատությունների դերը, ստեղծվեց հոգևոր-վարչական ամբողջական հիերարխիա շեյխ-ուլ-իսլամի ղեկավարությամբ: Դրա հետ միասին խախտվում էին մահմեդականության բազում

սկզբունքներ: Օրինակ համաձայն Մուհամմեդի պատգամների, խալիֆն ընտրվում էր կամ նշանակվում նախորդ խալիֆի կողմից: Իրականում խալիֆի պաշտոնը ժառանգական էր: Իսլամական օրենքներով մահմեդական համայնքն իրավունք ուներ անվայել վարքի, մտավոր ոչ լիարժեքության և նման այլ պատճառներով խալիֆին զահրնկեց անել: Իրականում խալիֆի իշխանությունը բացարձակ էր: Նույն այդ օրենքը ոչ մահմեդականին իրավունք չէր վերապահում մասնակցելու երկրի կառավարմանը, իսկ իրականում խալիֆն իր հայեցողությամբ ոչ մահմեդականներին նշանակում էր ամենաբարձր պաշտոնների:

Իսլամը սահմանել էր նաև մահմեդականի և ոչ մահմեդականի փոխհարաբերությունների բնույթը, որն ամփոփվում էր հետևյալ բանաձևման մեջ. Ալլահը բացարձակապես իսլամի կամքին է թողել հաղթված էլի ուլ քիթաբբին: Նրան իրավունք էր վերապահված սեփականացնել ոչ մահմեդականի ամբողջ ունեցվածքը, նրա մատաղահաս զավակներին օգտագործել իր մարմնական վայելքների համար: Մահմեդականը սուրբ գործ էր համարում անհավատներին սպանելը, նրանց գյուղերն ու քաղաքները ոչնչացնելը:

«Թուրքիայում,-գրում է Գրինը,-եկեղեցին ու պետությունը մի անբաժանելի միասնություն են: Կայսրության սուլթանը, միաժամանակ լինելով մահմեդական կրոնական աշխարհի խալիֆ, չի կարող վայր դնել այդ պարտականություններից մեկը, առանց մյուսից հրաժարվելու: Այս իրողության մեջ է ներկա սուլթանի քաղաքականության գաղտնիքը, ինչը կառավարման ընդհանուր սկզբունքների առումով ինքնասպանություն է: Մի կողմից նա շոսայլ է մեջիդների շինարարության ու վերանորոգման և իր տիրություններում մահմեդական դպրոցներ կառուցելու գործում, մյուս կողմից նա արհամարհեց ու վերացրեց քրիստոնյա պատրիարքներին հնուց տրված իրավունքներն ու արտոնությունները»: Նա դեմ կանգնեց քրիստոնեական նոր դպրոցների ստեղծմանը, եկեղեցիների կառուցմանը և նույնիսկ այն եկեղեցիների վերանորոգմանը, որոնք քանդվելու վտանգի տակ էին: Ինչո՞ւ էր նա այդպես վարվում: Որովհետև ամեն ինչից առաջ սուլթանը մահմեդական էր: Եթե նա նույնիսկ մոլեռանդ մահմեդական էլ չլիներ, նույնն էր անելու, քանի որ մահմեդական բնակչությունը նրա անձին նայում էր որպես հավատի պաշտպանի:

Պանիսլամիզմը ձևավորվեց 19-րդ դարի վերջին: Այն իմնվում էր համաշխարհային մահմեդական քաղաքական կառույցի խալիֆաթի գաղափարի վրա, որը պետք է կառավարվեր Շարիաթի օրենքներով: Վերագային միասնության գաղափարն իր էությամբ հակասում էր ազգային հիմքի վրա պետության ստեղծմանը, սակայն տվյալ դեպքում կոչված էր պաշապանելու թուրք աշխարհի և հոգևոր ավատատիրական շահերը հաստատելով դրանց գերիշխանությունը մամեդական աշխարհում: Իսլամի հենքի վրա միասնության մասին տեսությունը արտահայտում էր Արևմուտքի ներխուժման դեմ ուլեմաների պաշտպանական հակազդեցությունը, մի ներխուժում, որը սպառնում էր ավատատերերի արտոնություններին: Իսլամական միասնության վրա հիմնված պանիսլամիզմը նաև հանդիսանում էր Արևմուտքի գերիշխանությունը մահմեդական զանգվածների կողմից մերժելու ձև: Հենց սկզբից

պանիսլամիզմին Հատուկ գաղափարները, որոնք քարոզում էին մաշնեդական աշխարհի առանձնացում ու ինքնամփոփություն, մի կողմից ուղղված էին ոչ իսլամական երկրների ֆեոդալական և բուրժուական ազգայնամուլական խմբավորումներից պաշտպանվելուն, իսկ մյուս կողմից խնդիր ունեին ուժեղացնելու հակազաղութային համախմբումը:

Մենջերը «Los Angeles Times»-ի 1980թ հունիսի 8-ի Համարում գրում է «Օսմանյան կայսրության հասարակական կարգն ուսումնասիրող պատմաբանները ոչ միայն փորձ չէին անում այն համադրել պատմական ընդհանուր օրենքների և օրինաչափությունների հետ, այլ ընդհակառակը, ձգտում էին շեշտել, թե ինչով են թուրքիան և թուրքական պատմությունը տարբերվում այլ երկրներից և նրանց պատմություններից»: ԱՀա այս ամենամահմեդական ուսմունքը՝ իսլամիզմը, դարձավ կայսրության պաշտոնական գաղափարախոսությունը: Հանձին իսլամիզմի, Համիդը տեսնում էր ազգային հարցում միջին տրամադրությունների ուսմունք ազատ օսմանիզմի մեղմությունից և պանթուրքիզմի անիրագործելի լինելուց: Եվ հրապարակ նետվեց «Բոլոր մահմեդականների հետ ընդդեմ անհավատների» կարգախոսը: Մական սխալ է այն տարածված կարծիքը, թե սուլթան Համիդը հանդիսացավ իսլամիզմի և համաիսլամիզմի հիմնադիրը: Իսլամիզմը շատ ավելի վաղ էր ծնվել, քան Օսմանյան կայսրությունն անցում կկատարեր բացարձակ միապետության: Այն ծնվել էր մահմեդական ցեղերի ու ժողովուրդների կողմից նորանոր աշխարհներ զավթելու ալիքներից Մուհամմեդի կանաչ դրոշմը պարզել էին թուրքական Հորդանները նվաճած երկրների վրա:

Օսմանյան վարչակարգի հիմքում ի սկզբանե դրված են եղել կրոնական դոգմաները, որոնք բացառում էին մահմեդականի ու ոչ մահմեդականի իրավահավասարությունը և հանդիսանում էին այն առանցքը, որին խարսխված էին իսլամական ոչ միայն կրոնական, այլև վարչապետական կառույցները:

«Հայերը և թուրքերը, գրում է Արշակ Ալպոյաճյանը,-իբրև բնակակից ժողովուրդներ կապրեին միասին իբրև տիրապետյալ և տիրապետող: Հայը համակերպված էր իր վիճակին, վասնզի ոչ մեկ հույս կամ նեցուկ ուներ իր համար, իսկ թուրքը սանձարձակ կգործեր, վասնզի ոչ ոք իր ձեռքը կբռներ արգիլելու համար, որ իր ուզածը ընէ»:

Գնալով ոչ մահմեդական ժողովուրդների վրա ճնշումն ուժեղանում էր, և այդ ժողովուրդներին այլ ելք չէր մնում բացի պայքարից: Դրան իսլամիզմի պարագլուխները պատասխանեցին բռնի մահմեդականացման քաղաքականության սաստակացմամբ: Այդ դժնդակ իրավիճակում ծայր առավ զանգվածային դավանափոխությունը: Որոշ հայեր, «հուսալով ապահովության ելակետ մը գտնել», փորձեցին միանալ Ռուսական Օրթոդոքս Եկեղեցուն ստանալու ռուսների գեթ բարոյական աջակցությունը: Այլ կերպ ասած հենց սկզբից հայերի հակազդեցությունը կրեց ոչ թե քաղաքական և ապստամբական պայքարի, այլ պասիվ, կրավորական բնույթ: Ճիշտ է ասված «Թուրքիայում հայ ծնվելը դժբախտություն է, հայ ապրելը՝

հերոսություն»։ Եվ հայերի կողմից զենք ունենալու ձգտումը «ոչ թե ապստամբության նպատակ ուներ, այլ անձնական պաշտպանության»։

Կրոնական անհանդուրժողականությունը, սակայն, անգոր էր լուծելու մահմեդականների սոցիալական հիմնահարցերը։ Չնայած մահմեդական զանգվածը հաճույքով էր արձագանքում քրիստոնյաներին կոտորելու կամ թալանելու կոչերին, բայց ամեն անգամ այդ բարբարոսական գործողություններից հետո ակնհայտ էր դառնում, որ իսլամն անուժ է մահմեդական ազգաբնակչությանը զերծ պահելու բռնադատումից։

Օսմանյան սուլթանները կայսրության նույնիսկ ամենաձանր ժամանակներում չեն հրաժարվել նորանոր տարածքներ գրավելու, հարստությունների տիրանալու ծրագրերից։ Այդպես էր նաև Աբդուլ Համիդ 2-րդի շրջանում, որը և հիմքեր ստեղծեց իսլամիզմի կերպարանափոխման, պանիսլամիզմի տարածման համար։ Պանիսլամիզմի ոգին սուլթան-խալիֆ ֆենոմենն էր։

Պանիսլամիզմը եղել է ու մնաց իսլամի համաշխարհային տարածման գաղափարախոսություն՝ ոչ միայն կրանական այլև քաղաքական առումով։ Ի տարբերություն քրիստոնեության, իսլամը ծնվեց որպես տարածքների տիրանալու գաղափարախոսություն։ Բայց այն ոչ թե մարեց, այլ կանթեղվեց ու Օսմանյան կայսրության ճգնաժամի շրջանում գլուխ բարցրացրեց որպես ոչ այնքան աշխարհակալ մահմեդական պետություն ստեղծելու ձգտում, որքան միջոց Օսմանյան կայսրության կործանման առաջն առնելու, հակակշիռ հանդիսանալու Արևելյան հարցին։

Սուլթան Համիդը մեծ հարգանք ուներ պանիսլամիզմի գաղափարախոս Ջեմալ-էդդին ալ-Աֆղանու հանդեպ, որը ելդրզի մշտական հյուրերից էր և օգտվում էր սուլթանի առատաձեռնությունից։ Պանիսլամիզմի այս տեսաբանը գտնում էր, թե ամենակատարյալ պետությունը մահմեդական կրոնապետությունն է, իսկ դրա լավագույն օրինակը Օսմանյան կայսրությունը, որն ուներ պատմական մեծ առաքելություն սուլթան-խալիֆի հովանու ներքո միասնական պետական կազմավորման մեջ միավորել աշխարհի բոլոր մահմեդականներին և ստեղծել համաշխարհային մուսուլմանական կառույց, որ Օսմանյան կայսրությունից բացի պետք է ներառներ Իրանը, Աֆղանստանը, Հնդկաստանի մահմեդական մասը (Պակիստանը), Միջին Ասիան, Ինդոնեզիան, Աֆրիկայի զգալի մասը։ Այն լինելու էր դաշնակցային պետություն, որի մեջ մտնող երկրները պահպանելու էին ինքնավարություն և սուլթանին ենթարկվելու էին կրոնագաղափարախոսական առումով։

Համիդյան պանիսլամիզմը արյունարբու բնույթ ուներ, ձգտում էր իր նպատակներին հասնել ոչ մահմեդական ժողովուրդների արյան գետերի միջով։ Դա պանիսլամիզմի բացարձակ միապետական տարբերակն էր։

Պանիսլամիզմը, առաջին հերթին, ուղղված էր Ռուսաստանի դեմ։ Ահա թե ինչու այն արժանանում էր Անգլիայի հովանավորությանն ու աջակցությանը։ Սակայն ո՛չ Աբդուլ Համիդին և ո՛չ էլ Անգլիային այդպես էլ չհամոզվեց պանիսլամության

հիմքի վրա աշխարհաքաղաքական նոր հասկացություն, պետական կազմավորում ստեղծել, քանի որ իսլամական ժողովուրդները ոչ միայն գտնվում էին մեծ պետությունների միջև եղած առճակատումների խաչմերուկում, այլև իրենց ներսում ու միմյանց միջև այնպիսի հակասություններ էին պարունակում, որոնք անհնար էին դարձնում միավորման գաղափարի առարկայացումը: Մահմեդական ժողովուրդներին հուզում ու հետաքրքրում էր թե՛ Օսմանյան կայսրության մեջ միավորվելը, այսինքն՝ եվրոպական պետությունների տիրապետությունը թուրքականով փոխարինելը, այլ միավորվելը հանուն պետական և ազգային անկախության: Սոցիալ-դասակարգային առումով էլ մահմեդական ժողովուրդները միանման պայմաններում չէին, հիմնարար խնդիրներին միասնական մոտեցումներ չունեին: Յուրաքանչյուր հասարակական խավ յուրովի էր մոտենում նույնիսկ գաղութային լուծը թոթափելու խնդիրներին: Թուրք բուրժուազիան, մի կողմից, պանիսլամիզմն օգտագործում էր օսմանյան շուկային տիրանալու, մահմեդական աշխարհը Օսմանյան կայսրության շուրջ միավորելու համար, իսկ մյուս կողմից, քննադատում էր պանիսլամիզմի դոգմաները: Նա ձգտում էր իսլամի արտաքին քաղաքական գործոնի դերի բարձրացմանը, միաժամանակ հրահրելով կրոնական անհանդուրժողականություն, իր շուրջն էր համախմբում մահմեդական խավերին: Մուսուլմանական մոլեռանդությունն այդ բուրժուազիայի ձեռքին հզոր զենք հանդիսացավ գյավուրների տնտեսական դիրքերին ու հարստություններին տիրանալու գործում: Այսպիսով, պանիսլամիզմի հարցում ևս թուրք ավատատիրության ու բուրժուազիայի մոտեցումները ոչ միայն ի բար չէին հակասում, այլև, ըստ էության, լրացնում էին միմյանց, դրանք այնքան էին համընկնում, որ թուրք բուրժուազիան աստիճանաբար վերածվեց մահմեդական դոգմաների անադարտության ամենաջերմեռանդ պաշտպանի:

Ճիշտ է, 19-րդ դարում թե՛ Օսմանյան կայսրությունում և թե՛ մահմեդական մյուս երկրներում ծայր առավ իսլամը բարեփոխելու շարժում, սակայն այդ շարժումը արմատական փոփոխություններ չէր առաջադրում և լոկ խնդիր ուներ նոր ժամանակների ճաշակին համապատասխան դիմահարդարել իսլամը: Ջեմալ Աֆղանին գտնում էր, որ հասարակությունը վերակառուցելու համար ծայր առած շարժումը աշխարհիկ կյանքից պետք է տեղափոխել կրոնական բարենորոգումների բնագավառ այն հաշվով, որ դարձ կատարվի դեպի վաղ մահմեդականություն: Խնդրին հակառակ ծայրից էին մոտենում բարենորոգչական շարժման արմատական թևի ներկայացուցիչները: Նրանք ոչ միայն շեղվում էին պանիսլամիզմի մի քանի ավանդական սկզբունքներից, այլև, մերժում էին ծավալապաշտությունը:

Մահմեդականության նշանավոր կենտրոններից է Կովկասը՝ ռուսական լուծը թուրքականով փոխարինելու նպատակ էին հետապնդում Հարավային Կովկասում և Հյուսիսային Կովկասի լեռնականների շրջանում 19-րդ դարում ծավալված շարժումների մի մասը: Դրա արտահայտություններից էր նաև մյուրիդիզմը, որի գաղափարախոսության հիմքում ընկած էր սրբազան պատերազմի գլխավոր

սկզբունքը անհավատների դեմ պատերազմը Ալլաշին մերձենալու միակ ուղին էր: Այս շարժումները ղեկավարվում էին Կ. Պոլսից:

Մահմեդական ընդվզումների դեմ տևական, ծանր, մեծամեծ զոհեր խլող պատե-րազմները ցարական կառավարությանը հանգեցրին այն մտքին, թե մուսուլմաններին հպատակության մեմ պահելու համար միայն զենքը բավարար չէր, անհրաժեշտ էր նաև կաշառել մահմեդական վերնախավին: Եվ ցարիզմը չսխալվեց: Մահմեդական փաշաներն ու բեկերը հաճույքով գնացին գործարքի, տիրացան մեծ հարստությունների և կատարեցին «խաղաղարարի» դեր: Դեռ ավելին, ցարական իշխանություններն ու մահմեդական վերնախավը փաստորեն «սրբազան դաշինքի» մեջ մտան սոցիալական և ազգային շարժումների դեմ:

Ռուսաստանի մահմեդականության շրջանում պանիսլամիզմի տարածման գործում մեծ դեր խաղացին հահիզները: Նրանք առաջարկում էին մահմեդական լուսավորչական ծրագիր կրթության գործի բարենորոգում, համակարգի որոշ եվրոպականացում: Այս շարժման պարագլուխն էր Ղրիմի թաթար Ի. Գասպրինսկին, որը քարոզչական մեծ աշխատանք կատարեց լուսավորչական շարժման ծավալման, մահմեդականների եվրոպականացման ուղղությամբ: Գասպրինսկու կարծիքով թուրքերենն ու իսլամը հզոր միջոցներ էին Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների ազգային ինքնուրույնությունն ու գիտակցությունը զարգացնելու համար: Նա հռչակեց թրքականության սկզբունքը: Նա փաստորեն նոր որակ հաղորդեց պանթուրքիզմին Պոլսի թուրքերենը պարտադիր համարելով աշխարհի բոլոր թուրքալեզու ժողովուրդների համար:

Գասպրինսկին պահանջում էր Ռուսաստանի բոլոր մահմեդականների գաղափարական ու քաղաքական միավորում: Բնականաբար, այս և նման քարոզները թշնամաբար էին ընդունվում Ռուսաստանում:

Գերմանացի գիտնական Ա. Ռենցր գրում է, որ 1894-96թթ. կոտորածներից հետո «Ազգային պետական գիտակցությունը հակադրվեց պանիսլամիզմի կայսրական գաղափարախոսությանը, որը նպատակ էր հետապնդում ոչ միայն ոչ թուրք մահմեդական հպատակների շրջանում կասեցնելու ինքնավար շարժումները, այլև նրանց համախմբելու քրիստոնյա հպատակների դեմ արյան մեջ խեղդելու քրիստոնյա հայերի հուզումները»: Քանի որ պանիսլամիզմը պարունակում էր պանթուրքիզմի շատ տարրեր, պատահական չէ, որ թուրանիզմի հռչակագիրը ծնվեց պանիսլամիզմի ընդերքում 1890թ. Լուսեին գաղե Ալի բեյի «Թուրան» պոեմով: Նշանաբանը դարձավ Մ. էմինի խոսքը «Ես թուրք եմ: Իմ կրոնն ու ազգն ազնվացեղ են»: «Դրոշակ» թերթը 1906թ. փետրվարին պանիսլամիզմի մասին գրեց «Բազմատեսակ և հանդուգն ելրըզ Բեռշքի գաղտնարաններում մշակված համիդյան ծրագրերը համիսլամական շաղկապը բոլոր երկրների մահմեդականների մի թագավորով, որը սուլթանն էր լինելու, մի կենտրոնով, որը Ստամբուլն է, Հյուսիսային Աֆրիկայի, Եգիպտոսի, Կովկասի, նույնիսկ հնդկական մահմեդականության վերադարձ սուլթանականության գիրկը, ստամբուլյան խալիֆայական գայիսունի ներքո բոլոր մահմեդական աղանդների սյունիքների ու շիաների միացում առանց

քաղաքական որեէ խտրականության շահի, գահակալ խաների և այլ սուլթանների խոնարհումը պոլիսյան վեհապետության աչքի առջև և այլն, և այլն: Մի վեհապետ, մի խալիֆ, մի կենտրոն: Քաղաքական այդ ցնորքը, որը երկար տարիներ թաքնվում էր վեհապետական դիվանում, հանդես է գալիս ոչ միայն իբրև, տենչանք, այլև իբրև «մշակված ծրագիր», դեպի իրականացումը ձգտող, մահմեդական «ազգասերների» գլխի մեջ տեղավորվելուն փափագող, իբրև քաղաքական ծրագիր, նորագույն մուսուլման սերունդների ոգևորության առատ աղբյուր էրգրումի շրջանից գորք մտցնել Անդրկովկաս առաջանալով դեպի Կարսի, Երևանի, Գանձակի և Բաքվի նահանգները, ոտքի կանգնեցնել տեղական մուսուլման ազգաբնակչությանը և այդ երկիրը միացնել օսմանյան պետությանը, ահա սուլթանական նորագույն երազ-ծրագիրը, որի մասին թեև ոչ մանրամասն, բայց որոշ տեղեկություններ ունեն թե՛ Կովկասյան շտաբում, թե՛ Պետրոգրադում, թե՛ Լոնդոնի արտաքին գործերի նախարարությունում, թե՛ Բեռլինում, ինչպես վկայում են ոչ պաշտոնական ակնարկները և որի շուրջը վաղուց շշուկներ են լսվում կովկասյան թուրք պոլիտիկոսների շրջանում Կ. Պոլսի անթիվ ու անսպառ էմիսարների միջոցով»:

Ցարիզմի բթամիտ քաղաքականությունը Կովկասում թուրքերի շարժումով հակահեղափոխական մի զսպանակ պատրաստել հայկական վերանորոգիչ պահանջների դեմ, որի հետևանքը եղավ Արյան տարին Կազբեկի ու Արարատի ստորոտներում, ավելի համարձակություն և ուժ տվեց սուլթանական ծրագրին: Արյունը քաղաքական ծրագրերի ավագան դարձավ: Թուրքերի հակահայկական վայրագ քաղաքականությունը ցարի համար հակահեղափոխական շարժում էր, իսկ սուլթանի համար՝ համախլամական տիրապետության նախադուռը: Եվ այն թուրք «պոլիտիկոսները», որոնք անասնացած բյուրոկրատիային հավատացնում են, որ «հայկական կոտորած» ասելով, նրանք մի նպատակ միայն ունեն ծառայել ցարի գահին, այլ շրջաններին և այլ անձանց հավատացնում են, որ հակահայկական ոլթյունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բարեկարգումն այն ճանապարհի, որով անցնում է սուլթանական գորքը Կովկասը Մեծ խալիֆին վերադարձնելու համար:

Երիտթուրքերի մի մասը որոշակի ժամանակահատվածում հարեց պանիսլամիզմին, ապա հեռացավ դեպի օսմանիզմ, սակայն դրանով պանիսլամիզմը չդադարեց գոյություն ունենալուց:

Կ. Մարքսը իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում նշում է, որ մահմեդական մոլեռանդությամբ վարակված թուրքական «խաժամուժը» արգելակում էր Թուրքիային կանգնելու առաջադիմության ուղու վրա, որ նա «խանդավառությամբ» պաշտպանում էր իր երևակայական գերազանցությունը և իր ավանդական արտոնությունը անպատիժ կերպով էքսցեսներ իրականացնել քրիստոնյաների նկատմամբ:

Նաև նշենք, որ սուլթան Համիդը իսլամիզմն ու համախլամիզմը չէր բացարձակացնում: Նա հասկանում էր, որ ազգերի, ազգային պետությունների ձևավորման ավատատիրական փուլում ոչ ազգային կրոնական թե վերազգային քաղաքական սկզբունքների վրա կառուցված, ուսմունքները չեն կարող ձևավորել

գործնական քաղաքականություն: Շուտով իսլամիզմից անցում կատարեց թուրքիզմին, առաջ քաշեց պահանջ «փեշերը քշտել», հեռանալ Եվրոպայից և Անատոլիայում ստեղծել թուրքական ազգային պետությունն

Այս Հարցում պատմագիտության մեջ խառնաշփոթ տեսակետների առկայությունն ակնհայտ է: Դրանցից մեկը պնդում է «Կովկասի թուրքալեզու ժողովուրդներին Համիդի շուրջը համախմբելու, Ասիայում թուրանական ընդարձակ պետություն ստեղծելու ճանապարհին Օսմանյան կայսրության, պանթուրքիստների առաջ, իբրև գորեղ խոչընդոտ, հասակով մեկ կանգնած էր Հայաստանը, հայ ժողովուրդը, որին Բեռլինի կոնգրեսը ճանաչեց իբրև, իրավատեր իր պատմական Հայրենիքի...»: Արդյոք Հեղինակը կարող է ցույց տալ մի մեջբերում Աբդուլ Համիդ 2-րդից, որը հաստատի այս միտքը, ճիշտ է, Բալկաններում իրավիճակի բարդանալը սուլթանին բերեցին այն համոզման, թե պետք է հեռանալ Եվրոպայից, բայց հեռանալ ոչ թե Արևելք շարժվելու, այլ «Անատոլիայում կենտրոնանալու համար»: Նա փառք է տալիս Աստծուն, որ թուրքերին թողել է Անատոլիան, որտեղ են վերջինները «իրենց փեշերը հավաքելու», այսինքն ազգային պետություն ձևավորելու:

Ապա, ի՞նչ է նշանակում, թե Բեռլինի կոնգրեսը հայերին ճանաչեց «իբրև իրավատեր իր պատմական հայրենիքի», երբ այդ կոնգրեսը «շտկեց» Սան Ստեֆանոյի «սխալ ձևակերպումը» Հայաստանի փոխարեն ճիշտ համարեց դաշնագրում օգտագործել «հայաբնակ շրջաններ» արտահայտությունը: